ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(Մի խմբի ձևավորման օրինակով)

Հայ-իրանական բազմադարյան առնչությունները իրենց մեջ ներառում են էթնիկ, մշակութային փոխներթափանցումների, փոխազդեցությունների տարաբնույթ դրսևորումներ: Դրանցից են նաև հայկական ու իրանական հանրությունների պատմական հայրենիքներից դուրս գտնվող տարածքներում նրանց առնչությունների կոնկրետ դեպքերը: Այդպիսի ռեգիոններից է արևելյան Այսրկովկասը կամ պատմական Բուն Աղվանքը, որի էթնոմշակութային ու էթնոքաղաքական զարգացումների մեջ կարևոր դեր են խաղացել թե՛ հայկական, թե՛ իրանական շերտերը:

Արևելյան Այսրկովկասում հայ-իրանական փոխազդեցություններիի հետաքրքիր օրինակ են հանդիսանում թաթախոս հայերը, որոնց պատմական աշխարհագրությունն ընդգրկում է Դաղստանի հարավից Ապշերոն ընկած տարածքը և խմբի ձևավորման արմատները, մշակութային, էթնիկ, քաղաքական, սոցիալական նախադրյալներն ու զարգացումները կապված են ռեգիոնում դեռևս վաղ միջնադարից առկա հայկական ու իրանական էթնոմշակութային ներդրումների, դրանց հարաբերակցության ու ազդեցության հարցերի հետ:

Իրանական ազդեցություն: Թաթախոս հայերի ձևավորման խնդիրներն անմիջականորեն առնչվում են իրանական այն շերտի հետ, որոնք համարվում են ներկայիս թաթերի նախնիները, և այս տարածաշրջանում հաստատվել են Մասանյանների օրոք, ուստի իրանական ազդեցության խնդիրը էթնիկ ներկայության իմաստով դիտարկում ենք հենց այդ ժամանակաշրջանից սկսած:

226թ. Իրանում իշխանության անցած Մասանյան հարստությունը սկզբից նեթ քայլեր ձեռնարկեց տերության սահմաններն ընդարձակելու և հարևան երկրների վրա իր ազդեցությունը տարածելու ուղղությամբ:

Շապուհ I-ին /241-272թթ./ ենթակա երկրների ցանկում նշվում է նաև Աղվանքը /ներառյալ հվ. Դաղստանը/: Նրա իշխանությունը տարածվում է մինչև «Աղվանից դռան»[1]: Այս տարածքներում Շապուհ I-ի նախաձեռնությամբ կառուցվում են զրադաշտական տաճարներ, սկսվում է տարածվել զրադաշտականություն[2]: Այդ ժամանակաշրջանում, սակայն, ամուր ռազմաքաղաքական ներկայություն հաստատել այդ շրջատարածքում Մասանյաններին չի հաջողվում և 4-5-րդ դդ. «Աղվանից դռնով» անցնում և Այսրկովկաս ու Առաջավոր Ասիա են արշավում մազքութները, հոները[3]:

Մասանյան Իրանի ազդեցությունը արևելյան Ասրկովկասում ուժեղացավ 5-րդ դարից, Աղվանից մարզպանության կազմավորման շրջանից սկսած: Աղվանից մարզպանության կազմավորումը, որի մեջ սկզբնապես մտնում էին Աղվանից, Լփնաց, Բաղասականի թագավորությունները, հայկական Արցախ-Ուտիքը, ինչպես նաև Հազկերտ II-ի /439-457թթ./ վարչական ռեֆորմների արդյունքում մերձկասպյան շրջանում, Դերբենդից Կուր ընկած տարածքում ձևավորված արևելաաղվանական ցեղերի կամ ժողովուրդների մոտ մեկ տասնյակ թագավորություններ: Այդ ցեղերի կամ ժողովուրդների առաջնորդներին թագավորական տիտղոսներ շնորհեց Հազկերտ II-ը՝ նպատակ ունենալով արևելյան Այսրկովկասում հուսալի հենարաններ ունենալ և նրանց ուժերը օգտագործել Դերբենտ - Չողի պաշտպանության համար[4]: Մասանյանների համար այս շրջանի կարևորությունը ընդգծվում էր նաև նրանով, որ մարզպանության կենտրոն դարձավ Չողը, և Աղվանից մարզպան Մերուխտը հայտնի էր «Չողա մարզպան» տիտղոսով: Մարզպանության կենտրոն լինելը, տերության համար ստրատեգիական նշանակություն ունենալը ենթադրում էր նաև պարսկական ռազմաքաղաքական և ծառայական անձնակազմի, կայազորների առկայություն: Պարսկական կայազորներ էին հաստատվել նաև Աղվանքի այլ քաղաքներում ու բերդերում[5]: Հազկերտ II-ի քաղաքականությունը Այսրկովկասում բնութագրվում է նաև քրիստոնյաների հալածանքներով, զրադաշտականության տարածմամբ: Աղվանքի քաղաքներում ու ամրոցներում պարսկական կայազորների հետ մեկտեղ հաստատվում են նաև զրադաշտական կրոնի սպասավորներ, կառուցվում են զրադաշտական տաճարներ, ուժեղացվում է նաև պարսկական ռազմական ներկայությունը[6]: Իրանի դիրքերի ամրապնդումն այս շրջատարածքում ընթանում էր ոչ միայն ռազմաքաղաքական միջոցառումներով, այլև պաշտպանական համակարգերի կառուցմամբ, և Հազկերտ II-ի օրոք պաշտպանական ամրություններ են կառուցվում նաև Դերբենտ- Չողում[7]:

Աղվանից մարզպանության ձևավորման շրջանում Դերբենդ - Չողի պաշտպանությանը մասնակցում էին նաև հայ նախարարներն իրենց զորաջոկատներով°:

Հազկերտ II-ին հաջորդած Պերոզի /459-484թթ./ օրոք շարունակվեց Իրանի դիրքերի ամրապնդումը արևելյան Այսրկովկասում: Աղվանքում հակահիրանական ապստամբության ճնշումից հետո Պերոզը վերացրեց Աղվանից թագավորությունը /461թ./, ինչպես նաև մարզպանության մեջ մտնող մյուս տեղական թագավորությունները: Այս ամենի հետևանքով մարզպանությունը դարձավ վարչականորեն ավելի միաձույլ և կենտրոնացված[9]: Պերոզը, թերևս, որոշ շինարարական աշխատանքներ ձեռնարկեց նաև Դերբենտում[10]:

Իրանի ազդեցությունը արևելյան Այսրկովկասում աճեց հատկապես Կավատ կամ Կուբադ I / 488-531թթ./ և Խոսրով I Անուշիրվանի /531-579թթ./ օրոք:

Կուբադ I-ի օրոք արևելյան Այսրկովկասում կառուցվեցին պաշտպանական հզոր համակարգեր. «Բարմակյան պատը» /ներկայիս Ադրբեջանի Խիզի շրջանում/, դրանից հյուսիս գտնվող «Շարրանյան» կամ «Ադուզդ- Կավաղյան» պարիսպները[11]: Դերբենտ – Չողի շրջանում նույնպես կառուցվեցին պաշտպանական կառույցներ[12]: Կուբադ I-ի ձեռնարկած միջոցառումներից էր նաև իրանական բնակչության վերաբնակեցումը, նոր բնակավայրերի հիմադրումը այս շրջատարածքում: Ըստ «Դերբենտ Նամե»-ի՝ Կուբադ I-ը «կառուցեց քաղաքներ» և «ֆարսական նահանգներից» բնակչություն վերաբնակեցրեց այս շարջատարածքում[13]: Կուբադ I-ի հիմնած քաղաքներից է համարվում Ղուբա կամ Կուբա քաղաքը Ադրբեջանում[14]: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Կուբադ I-ը Դերբենդում բնակեցնում է Իրանի «ներքին շրջաններից» տեղափոխված, «իր ազգից» 3000 ընտանիքներ[15]:

Այս տարածաշրջանում Իրանի դիրքերի ամրապնդումը շարունակվեց նաև Մասանյան հարստության հզոր տիրակալ Խոսրով I Անուշիրվանի /531-579թթ./ օրոք: Այդ նպատակով նա ձեռնարկեց մի շարք քաղաքական, վարչական միջոցառումներ՝ դրա հետ միասին իրականացնելով պաշտպանական համակարգերի շինարարություն հս. - ակ. Այսրկովկասում, հվ. Դաղստանում: Նրա օրոք կառուցվեց Դերբենդի պաշտպանական համալիրը /547 կամ 569թ./, որը դարձավ հուսալի պատվար տերության հյուսիսային սահմանի այս հատվածում[16]: Համարվում է, որ դեռևս հոր՝ Կուբադ I-ի օրոք Անուշիրվանը գտնվում էր Դերբենդում և հոր թույլտվությամբ կառուցում է «360 ամրոցներ և քաղաքներ», որտեղ բնակեցնում է «պարսկական շրջաններից» բերված վերաբնակիչներին[17]:

Ըստ տեղեկությունների՝ Ղայթախում հաստատվում է Գիլյանից և Քաշանից բերված իրանական բնակչություն, Թաբասարանում՝ Թաբաս-

ռիստանից և Սպահանից, վերջիններս կազմում էին Դերբենդի շրջանի լավագույն զորամիավորումները, Ագրանում բնակեցվեցին Խորասանից, իսկ Մուսկուրում, Ախտիում, Կյուրինյան տարածքներում՝ Ֆարսից բերված վերաբնակիչներ[18]: Ախտիում իրանական բնակչության և զորաջոկատների հետ միասին այստեղ հաստատվում է նաև Սասանյան տոհմի ներկայացուցիչներից մեկը, և Սասանյանների հետնորդները այստեղ կառավարում էին մինչև 8-րդ դարը[19]:

Սասանյանների հյուսիսային սահմանի այս հատվածում հաստատված «պահապանները» /զինվորականություն, ռազմական խավը/ գտնվում էին սոցիալական արտոնյալ պայմաններում: Տրամադրվում էին հողատարածքներ, որտեղ բնակվող ազատ համայնականների հաշվին ապահովվում էր նրանց գոյությունը[20]: Մյուս կողմից, համաձայն հին ավանդույթի, զինապարտ էին համարվում և կոչված էին ռազմական ծառայության իրանական համայնքները, իսկ հարկային բեռը ծանրանում էր ոչ իրանական բնակչության վրա[21]:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ այս տարածքներում իրանական բնակչության և ռազմական խավի միջոցով ստեղծվում էին ռազմականացված բնակավայր-գաղութներ: Դրանց ազդեցության ու ներկայության մասին է խոսում նաև հվ. Դաղստանի տեղանվանական համակարգում առկա ուժեղ իրանական շերտը[22]: Եղած տեղեկությունները, թեև ոչ ամբողջությամբ, սակայն պատկերացում են տալիս էթնիկ այդ տեղաշարժերի մասին և մատնանշում, որ վերաբնակեցման հիմնական ուղղություններից էր /եթե ոչ հիմնականը/ հս. արևելյան Այսրկովկասը /Դերբենդ, հվ. Դաղստան/:

Խոսրով I Անուշիրվանի ծեռնարկների թվում էր նաև վասալական իշխանությունների կամ թագավորությունների կազմակերպումը Սասանյան տերության այս հատվածում: Ինչպես արդեն ասվեց, այս քաղաքականությունը սկզբնավորվել էր դեռևս Հազկերտ II- ի օրոք[23]: Խոսրով I Անուշիրվանի օրոք կազմավորված այդ իշխանությունների կամ թագավորությունների մի մասը, թերևս, կառավարվում էր իրանական եկվոր վերնախավի կամ դինաստիաների կողմից[24]: Սասանյաններին ենթակա պետական այդ կազմավորումների շարքում հիշատակվում է նաև Շիրվանը, որի կառավարող Շիրվանշահերը ունեին իրանական ծագում, թերևս նաև ազգակցական կապեր Սասանյանների հետ[25]: Շուտով Շիրվանշահերը իրենց իշխանությանը միացրին նաև Դերբենդը՝ հարակից տարածքներով[26]: Այն Շիրվանի կազմում էր նաև արաբական արշավանքների նախօրեին, դրանց շրջանում և համարվում էր շիրվանշահերի ժառանգական տիրույթ[27]: Նման իրավիճակը պահպանվեց հիմնականում մինչև արաբական արշավանքները և արաբական տիրապետության հաստատումը արևելյան Այսրկովկասում:

5-6-րդ դդ. Իրանի քաղաքական դիրքերի ամրապնդումը արևելյան Այսրկովկասում բնականաբար իր հետ պետք է բերեր նաև լեզամշակութային ազդեցության տարածում և ուժեղացում: Վերը նշված խնդրի քննարկման առումով կարևորվում է տեղական քաղաքական, էթնոմշակութային միջավայրի գործոնը, այսինքն՝ ինչպիսի՞ պայմաններում էին ընթանում նշված գործընթացները և արդյո՞ք այն նպաստում էր իրանական մշակույթի տարածմանը:

Արևելյան Այսրկովկասը բնակեցված էր հիմնականում կովկասյան ծագում ունեցող աղվանական ցեղերով կամ ժողովուրդներով, որոնք դեռևս գտնվում էին միասնական էթնիկ հանրության ձևավորման ճանապարհին, ունեին ամորֆ պետական կազմավորումներ: Քաղաքական թույլ կառուցվածքով, էթնիկապես տարանջատված կամ չկոնսոլիդացված արևելակովկասյան միջավայրում դյուրությամբ մեծ ազդեցություն կարող էր ունենալ և գերակա դիրք գրավել քաղաքական իշխանությամբ օժտված կամ ամուր հենարան ունեցող մշակույթը: 5-6-րդ դդ. նման գործառույթ արևելյան Այսրկովկասում ունեցավ իրանական մշակույթը, որի ազդեցության աճը, տարածումը այս շրջատարածքում պայմանավորված էր Մասանյանների հետևողական և նպատակաուղղված քաղաքականությամբ:

Իրանական ռազմածառայական խավի գոյությունը, իրանական ծագմամբ դինաստիաները, զրադաշտականության տարածումը, վերջապես էթնիկ իրանցի վերաբնակիչների առկայությունը ամուր հենարան էին ծառայում իրանական մշակույթի, Մասանյան Իրանի և զրադաշտական կրոնի պաշտոնական լեզվի՝ պարսկերենի /միջին պարսկերենի կամ պահլավերենի/ տարածման համար: Այն հանդիսանում էր գրական լեզու, օգտագործվում էր վարչական, առևտրատնտեսական, կրոնական ոլորտներում /դրա դրսևորումներից է նաև Դեբբենդում պահլավերեն արձանագրությունների առատությունը/[28] Միաժամանակ իրանական վերնախավի առկայությունը ենթադրում էր դրա կիրառում սոցիալական բարձր շերտերում, իսկ իրանցի վերաբնակիչների գոյությունը դրա համար ամուր և տևական հիմք էր ապահովում, նպաստում իրանական լեզվի և մշակույթի տարածմանը արևելակովկասյան միջավայրում: Իրանական լեզվամշակութային ազդեցության գերակա դերը ապահովվում էր քաղաքական իշխանությամբ աջակցությամբ:

Ըստ էության 5-6-րդ - 16-րդ դդ. արևելյան Այսրկովկասում, չնայած տարաբնույթ քաղաքական, դավանական փոփոխություններին, գերակայում էր իրանական ազդեցությունը: Երկրամասը կառավարում էր և սոցիալական վերնախավը կազմում էր իրանական տարրը, գոյություն ուներ նաև էթնիկական իրանական հոծ զանգված: Վերը նշված հանգամանքներով պայմանավորված «ֆարսերենը» գործածվում էր թե՛ վերնա-

խավում և թե՛ համարվում էր «ընդհանուր գործածության» լեզու Առանում ու Շիրվանում: Այդ ազդեցությունը որոշ փոփոխություններով պահպանվեց մինչև 15-16-րդ դդ., երբ Արևելյան Այսրկովկասը հայտնվեց ղզլբաշների տիրապետության ներքո, ընդ որում թեև այն քաղաքականապես Իրանի կազմում էր գտնվում, սակայն ղզլբաշական իշխանությունը իր հետ բերում էր թյուրքական սոցիալական վերնախավի և քոչվոր տարրի հաստատում գրավված տարածքներում: 16-րդ դ. ղզլբաշները վերացնում են Շիրվանշահերի իրանական դինաստիան և ողջ շիրվանյան վերնախավը, երկրամասի սոցիալական վերնախավը սկսվում է ձևավորվել բնականաբար թուրքական ռազմաքաղաքական տարրից:

Հայկական ազդեցություն: Պատմական տարբեր ժամանակաշրջանում, ինչպես ցույց են տալիս փաստերը, արևելյան Այսրկովկասում ակտիվ դերակատարում է ունեցել նաև հայկական մշակութային, քաղաքական, էթնիկ տարրը:

Մի մասով լինելով այսրկովկասյան երկիր՝ Հայաստանը անտարբեր չէր կարող լինել Ճորա լեռնանցքի պաշտպանության գործում, և, ինչպես հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը, հայոց Վաղարշակ / Տրդատ I/ թագավորը Սիսականներին հանձնարարում է «պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը»[29]:

Վրաստանի մարզպան եղած ժամանակ Վասակ Սյունին էր ապահովում այդ լեռնանցքի պաշտպանությունը[30] և՝ հետագայում ևս մասնակցություն ուներ այդ գործին[31]: Ճիշտ է, դրանք արդեն Սասանյան Իրանի միջոցառումներն էին, սակայն հայկական տարրի օգտագործումը նման նպատակներով նորություն չէր Իրանի համար, և 5-րդ.դ., ինչպես հաղորդում է Եղիշեն, «Հոնաց պահակի» պաշտպանությանը նաև հայ նախարարներն էին մասնակցում[32]: Դա այն ժամանակշրջանն էր, երբ ձևավորվում էր Աղվանից մարզպանությունը, և Իրանը ակտիվ միջոցառումներ էր ձեռնարկում Դեբբենդ - Չորի պաշտպանության համար՝ ներգրավելով տեղական ուժեր, տեղադրելով պարսկական կայազորներ:

Քրիստոնեության տարածման հետ կապված շրջատարածքում զգալի հետք թողեց հատկապես հայկական մշակութային ազդեցությունը:

4-րդ դ. Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո, Աղվանից թագավորությունը նույնպես այն ընդունեց որպես պետական կրոն: Պետք է ասել, որ այս ժամանակաշրջանում քրիստոնեության տարածումը Իբերիայում, Աղվանքում անմիջականորեն կապված էր Հայաստանի հետ և կովկասյան այս երկրներում ձևավորված եկեղեցիները, փաստորեն, վարչականորեն և դավանաբանորեն Հայոց եկեղեցու մասն էին կազմում[33]: Քրիստոնեության տարածումը իր հետ բերում էր մշակութային փոփոխություններ. հայերենի կիրառումը որպես ժամասացության լեզու, քրիստոնյա բնակչության ընդգրկումը հայկական մշակույթի ո-

լորտ: Քրիստոնեության տարածումը, դրա հետ կապված մշակութային փոփոխությունները, սակայն, տևական ժամանակ և ազդեցություն էին ենթադրում: Շատ ժամանակ քրիստոնեության քարոզչությունը հանդիպում էր խոչընդոտների, հարկ էր լինում կրկին միսիոներական գործունեություն ծավալել նախկինում անվանապես քրիստոնյա դարձած շրջաններում

Հյուսիս-արևելյան Այսրկովկասում՝ Մազքթաց երկրում քրիստոնեության տարածումը հանդիպեց խոչընդոտների: Ինչպես հաղորդում են հայ մատենագիրները /Փավստոս Բյուզանդ, Մովսես Խորենացի, Մովսես Կաղանկատվացի/ Գրիգոր Լուսավորչի թոռ, Աղվանից կաթողիկոս Գրիգորիսը քարոզչական գործունեություն է ծավալում մազքութների մոտ, սակայն նրանց Սանեսան թագավորի հրամանով տանջամահ է արվում Վատնյա դաշտում /Դերբենտից հարավ/[34]: Ինչպես հաղորդում է Մովսես Կաղանկատվացին, քրիստոնյա դարձած Սանեսանի որդիները՝ Մովսեսը, Դանիելը, Եղիան, մոտ 3870 տղամարդկանց հետ հեռացան Արցախ, Դիզափայտ լեռան վրա «խոտաճարակ կյանքով ապրելու», սակայն հետապնդելով նրանց՝ Սանհսանը բոլորին սրի է քաշում[35]:

5-րդ դ. Աղվանքում, որը 4-րդ դ. ընդունել էր քրիստոնեություն, ակտիվ մշակութային, քարոզչական գործունեություն ծավալեց Մեսրոպ Մաշտոցը: Նա տեղական բարբառներից մեկի հիման վրա ստեղծեց Աղվանից այբուբենը, սակայն Մաշտոցի մշակութային առաքելությունը աղվանական միջավայրի վերը նշված առանձնահատկություններով պայմանավորված հաջողություն չունեցավ, այբուբենը գործնականում գրեթե չկիրառվեց և ընդհանրական գրական աղվանական լեզու չստեղծվեց[36]:

428թ. Արշակունյաց հարստության վերացումից հետո Մասանյան արքունիքը Հայաստանից անջատում և նոր ձևավորվող Աղվանից մարզպանությանն է կցում Ուտիքը[37]:

449-451թթ. Հայաստանում բռնկված հակապարսկական ապստամբությունը տարածվեց նաև Աղվանից մարզպանությունում, որտեղ, ինչպես արդեն նշվել է, Հազկերտ II-ը ևս փորձում էր բռնի տարածել զրադաշտականություն: Օգնության հասնելով ապստամբած Աղվանքին՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայկական զորագունդը Խաղխաղի ճակատամարտում պարտության է մատնում մարզպան Սեբուխտի գլխավորած պարսկական զորաբանակը: Այնուհետև տեղական ուժերի հետ համատեղ ռազմական գործողություններ են ծավալվում մարզպանության տարածքում, և հայ- աղվանական միացյալ ուժերը ջախջախում են Ճորա պահակի պարսկական կայազորները[38]: Կարևոր այդ հանգույցի պաշտպանությունը հանձնելով Աղվանից թագավորական տան ներկայացուցիչներից Վահանին, դաշինք կնքելով հոների հետ, Վարդան Մամիկոնյանը վերադառնում է Հայաստան[39]: Այս դեպքերի կապակ-

ցությամբ, թիրևս, հայկական որոշ ուժեր մնացին և ներգրավվեցին Ճորա պահակի պաշտպանությանը:

450-451թթ. հակապարսկական ապստամբության ճնշումից հետո Մասանյանները Հայաստանից անջատում ու Աղվանից մարզպանությանն են միացնում նաև Արցախը[40]: Կուրի աջափնյակի հայկական տարածքների՝ Արցախ- Ուտիքի կցումը Աղվանից մարզպանությանը իր հետ բերում էր նաև հայկական տարրի դիրքերի ամրապնդմանը և ուժեղացմանը Աղվանքի քաղաքական, մշակութային ոլորտներում[41]:

Աղվանից մարզպանության կազմավորումը, ինչպես արդեն ասվել է, իր հետ բերում էր նաև վարչական փոփոխություններ: Համարվում է, որ 5-րդ դարում, այդ կապակցությամբ Աղվանից եկեղեցու կենտրոնը Կապաղակից տեղափոխվում է Չող և այդտեղ մնում մինչև 552թիվը[42]:

Աղվանից կաթողիկոսության Չողում հաստատվելը ցույց էր տալիս այդ տարածքում քրիստոնեական ավանդույթների առկայության մասին, մյուս կողմից դա շարունակությունն էր այն հանգամանքի, որ ըստ միջնադարյան ավանդույթի՝ հոգևոր իշխանության նստավայրը պետք է լիներ քաղաքական կենտրոնում կամ նրա մոտ: Չողում Աղվանից կաթողիկոսությունը մնում է մինչև 552 թ., երբ հյուսիսից ներխուժումների սպառնալիքի ներքո այն տեղափոխվում է Պարտավ[43]: Հետաքրքրական է, որ հենց այս ժամանակաշրջանում / 6-րդ դ./, Դերբենդի պաշտպանական համակարգի շինարարության ժամանակ, կառուցման նույն եղանակով ու ձևով Դերբենդում եկեղեցի է կառուցվում: Ըստ ավանդության՝ այս տաճարը, որն այդ ժամանակաշրջանի քրիստոնեական ընդարձակ կառույցներից էր, կրում էր Գրիգորիսի անունը, և հետագայում արաբները այն մզկիթ են դարձնում /ներկայումս Ջումա մզկիթը/[44]: Քրիստոնեական տաճարի կառուցման փաստը այդ ժամանակաշրջանում և այդ վայրում վկայում է քրիստոնյա բնակչության առկայության ու ազդեցության մասին, մյուս կողմից կարող է ցույց տալ, որ վերաբնակեցման ակտիվ տարածքում գտնվող Դերբենդում այդ շերտը սկսում է աճել ի հաշիվ հայ կամ քրիստոնյա բնակչության: Խոսրով Անուշիրվանի այս ձեռնարկների կապակցությամբ արաբական աղբյուրները հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում:

9-րդ դ. արաբ հեղինակ Բալաձորին նշում է, որ Խոսրով Անուշիրվանը իր կառուցած վայրերում՝ Շաբիրանում, Մասկատում, Բաբ ալ Աբվաբում բնակեցրեց ժողովուրդ, որին նա կոչում էր *սիյասիջիններ*[45]: 9-10-րդ դ. պատմիչ Իբն ալ Ֆակիհը հաղորդում է, որ Դերբենդի պարիսպների վրա կան «7 անցքեր, որոնցից յուրաքանչյուրի առաջ շինված է մի քաղաք, և նրանց մեջ ապրում են պարսիկ զորականներ, որոնք կոչվում են *Սիյասիկիաններ*» և ավելացնում է.«Ասում են, որ Հայաստանի բնակիչ տղամարդիկ պարտավոր են պաշտպանել այդ պարիսպները և դար-

պասնիրը»[46]: Մեկ այլ հեղինակ՝ Կուդաման/ 9-10-րդ դ./ գրում է որ Անուշիրվանը հիմնեց Շաբրան, Մասկատ, Բաբ ալ Աբվաբ քաղաքները և այդ վայրերում բնակեցրեց իր զորքի մեջ գտնվող *սիյասիջիններ*ի ջոկատները[47]: Նույն դեպքերն է նկարագրում 12-13-րդ դ. հեղինակ Յակուտ ալ Համավին, որը Խոսրով Անուշիրվանի ձեռնարկների մասին տեղեկացնում է «...հետո կառուցեց Բաբ ալ Աբվաբը /Դերբենդը - Ա. Հ./, որը Աբվաբ կոչվեց, որովհետև շինված էր լեռնային անցքի վրա և այդ վայրերում բնակեցրեց *Մայասաջին* կոչված մի ժողովուրդ»[48]:

Արաբ հեղինակների այս հիշատակությունները /*սիյասիջիններ, սիյասիկիաններ, Մայասաջիններ,*/ նկատել է դեռևս Ն. Ադոնցը և կարծիք հայտնել, որ դրանցում հիշատակվում են սյունեցիները: Նա նշում է, որ «սիսաիկին» ձևը դա «սիսականի» հոգնակի արաբացված ձևն է, իսկ բառը վերցված է հին պարսկական աղբյուրից / Իբն Ֆակիհը նշում է, որ իր տեղեկությունը վերցրել է Ահմեդ իբն Վաղիխ Սպահանցուց/, իսկ արաբական ձևը Սիսաջան և սիասիջին է: Ն. Ադոնցը մեջ է բերում նաև Ատ. Օրբելյանի այն տեղեկությունը, ըստ որի Վաղարշակ թագավորը Սիսական տոհմին հանձնեց արքայական զորքերի բարձր հրամանատարության իրավունքը՝ պայմանով, որ նրանք «ընդդեմ կալ հանապազ պատերազնաւ դրանն Հոնաց, որոյ անունն առաջոյն Սիսան կոչիւր» և մատնանշում, որ դա պատմական այն փաստի արձագանքն էր, որ այդ դոները պաշտպանում էին Սիսանի /Սյունիքի/ հայերը՝ դրան ավելացնելով Ղազար Փարպեցու մոտ եղած այն վկայությունը, ըստ որի Իբերիայի մարզպան եղած ժամանակ Վասակ Սյունին հսկում էր նաև Դերբենդի անցքը[49]:

Խնդրին անդրադարձել է նաև Ս. Երեմյանը, այն քննարկելով պատմական լայն հենքի վրա: Նա դիտարկում է Սյունիքի նախարարական տան տեղն ու դերը Մասանյանների կովկասյան քաղաքականության մեջ, նշում, որ Վրաստանի մարզպան եղած ժամանակ Վասակ Սյունու ձեռքում էր գտնվում Դերբենդ- Չողի պաշտպանությունը, իսկ 6-րդ դ կեսերին Սյունյաց իշխանները անմիջականորեն ենթարկվում էին Փայտակարանում գտնվող պարսկական հյուսիսային բանակի հրամանատարությանը, որի գլխավոր խնդիրը կովկասյան լեռնանցքների պաշտպանությունն էր, և 5-6-րդ դդ. Սյունյաց նախարարական տան պարսկամետ կողմորոշումը հնարավորություն էր տալիս նրանց իրենց տեղն ու դիրքը Մասանյան արքունիքում բարձրացնելու համար և նպաստավոր պայմաններ ապահովում ներգրավվելու Դերբենտ- Չողի պաշտպանությանը՝ Մասանյան Իրանի կարևորագույն այս ձեռնարկին, մանավանդ որ հայկական ուժերի օգտագործումն այդ նպատակով նորություն չէր պարսկական արքունիքի համար[50]:

Վերը արտահայտված տեսակետը ունի նաև Ս. Բարխուդարյանը: Հիմնականում կրկնելով արդեն արտահայտված փաստարկները այդ խնդրի կապակցությամբ՝ նա ավելացնում է նաև վիմագրական տեղեկություններ՝ ցույց տալով, որ հս. -արևելյան Այսրկովկասում և հվ. Դաղստանում հիշատակվող մի շարք հայկական գյուղերի տապանաքարերը թվագրվում են 6-րդ դարից[51]:

Վերը նշված արաբական հիշատակություններում Սյունիքի բնակչությանն է հակված տեսնել նաև Զ. Յամպոլսկին[52]:

Այս տեսակետը միանշանակորեն չի ընդունվում: Մարկվարտը արաբական աղբյուրներում հանդիպող այդ տերմինները բխեցնում է միջին պարսկերեն «սպասիզ» /ծառայող մարդիկ, պահակ/ բառից[53]: Մ. Կրամերսը առաջարկում է այդ տերմինը ծագած համարել պահլավերեն *nišāstāghān* – հաստատված, հիմնած բառից, այսինքն՝ որպես զինվորական վերաբնակիչներ, կայազորներ[54]: Վ. Մինորսկին նշում է, որ այդ տերմինը արաբական աղբյուրներում աղավաղված ձևով է հանդիպում և իրեն կասկածելի է թվում Ս. Երեմյանի ստուգաբանությունը՝ մատնանշելով, որ ամեն դեպքում այդ տերմինները հասարակ և ոչ թե հատուկ անուններ են[55]:

Բարդ էթնոդավանական խճանկար ունեցող կովկասյան միջավայրում նման խնդիրները պետք է քննարկել ավելի լայն համատեքստով՝ այլ աղբյուրների ու տեղեկությունների համեմատությամբ՝ հաշվի առնելով էթնիկ, դավանական, քաղաքական, մշակութային բազում գործոններ և զուտ բառային կամ քերականական ստուգաբանությամբ նման խնդիրների անդրադառնալ արդյունավետ չի կարող լինել:

Ակնհայտ է, որ ինչպես 5–րդ դարում հայերն առհասարակ, այնպես էլ 6-րդ դարում սյունեցի հայերը հս.- արևելյան Ասրկովկասում մասնակցում էին Մասանյան տերության հյուսիսային սահմանների պաշտպանությանը, և, թերևս, այստեղ բացի զինվորական վերաբնակիչներից, հաստատվել էր նաև խաղաղ բնակչություն: Հայտնի է, որ այս ժամանակշրջանում այսրկովկասյան երկրներում, ներառյալ Հայաստանում անցկացվում է աշխարհագիր, մարդահամար, և Խոսրով Անուշիրվանը մտցնում է հարկային նոր համակարգ: Բացի հարկային պարտավորություններից, բնակչությունը պարտավոր էր կատարել նաև պարհակ՝ բանվորական ուժ տրամադրելով պետական շինարարական աշխատանքների համար: Ենթադրվում է, որ դա օգտագործվում էր նաև Դերբենդ - Չողի պաշտպանական համակարգի կառուցման համար, որի շինարարական աշխատանքները ղեկավարում էր Մասանյան տերության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը՝ այսրկովկասյան երկրների գլխավոր հարկահավաքն ու պետական շինարարական աշխատանքների ղեկավարը[56]:

Ինչ վերաբերում է վերը հիշատակված տերմիններին և դրանց առնչվող խնդիրներին, ապա արաբական աղբյուրների համեմատական քննությունն իսկ ցույց է տալիս դրանցում սյունեցիներ տեսնելու տեսակետի ճշմարտացիությունը, իսկ հայկական աղբյուրների հետ համեմատությունը, այդ ժամանակշրջանի պատմաքաղաքական միջավայրում խնդիրը դիտարկելը լրացուցիչ հիմնավորում են այդ տեսակետը:

Ի դեպ ոչ միայն սյունեցիները, այլև հայերն առհասարակ կարող էին անվանվել «սիսականներ»՝ ելնելով այն հանգամանքից, որ ավանդաբար Սյունաց նախարարական տունն էր մասնակցում Ճորա պահակի պաշտպանությանը:

Հարավային Դաղստանում «Հայկական ամրոց», «Հայկական պատնեշներ»[57] անունները կրող վաղ միջնադարյան բնակավայրերի առկայությունը նույնպես ցույց է տալիս այդ ժամանակաշրջանում հայկական ռազմական ուժի առկայության, հայկական տարրի ներգրավվածության մասին այդ շրջատարածքի պաշտպանությանը, և մեկ անգամ ևս հիմնավորում այդ կապակցությամբ վերը քննարկված տեսակետները:

Հայկական տարրը, որ Իրանի կողմից ներգրաված էր այդ տարածքների պաշտպանությանը, փաստորեն ուներ նույն սոցիալական արտոնությունները և կարգավիճակը, ինչ նույն գործառույթները ունեցող Դերբենդի մյուս «պահապանները»:

Վերը նշված տեղեկություններից բխում է, որ այդ վայրերում ստեղծվել էին նաև ռազմականացված հայկական բնակավայրեր, ինչպես նաև գոյություն ուներ հայկական ռազմաքաղաքական վերնախավ, որոնց հրամանատարությամբ էլ գործում էին հայկական ուժերը:

Ուշագրավ է որ, ինչպես աբյուրների սուղ տեղեկություններն են ցույց տալիս, հայկական տարրը բնակեցվում է Դերբենդում, Մասկատում, Շաբրանում, որտեղ հաստատվում են նաև Ֆարսից եկած իրանական վերաբնակիչները[58]: Այս փաստը ինքնին վկայում է այս շրջատարածքում հայկական և իրանական խմբերի սերտ փոխազդեցության, խառը բնակավայրերի առկայության մասին: Փոխադարձ ազդեցության, հարաբերությունների գործում կարևոր դեր էր խաղում այն հանգամանքը, որ այս երկու զանգվածները ունեին նույն գործառույթը՝ ներգրաված էին ռազմական ծառայության մեջ և ունեին սոցիալական նույն կարգավիճակը:

Հայկական էթնիկ ներկայության մասին տեղեկությունները միայն վերոասացյալով չեն սահմանափակվում: Հարավային Դաղստանում մի շարք հայկական բնակավայրերի հիմնումը կապվում է Հայաստանից եկած վերաբանակիչների հետ, որոնք թողել են իրենց հայրենիքը անբերրիության, աղքատության պատճառով, և այդ վայրերում հաստատվելեն դեռևս առասպելական Մաշտակ թագավորի օրոք[59]:

Կովկասյան այս ռեգիոնում ակտիվ դեր են խաղացել նաև հայ վաճառականները: Դեռևս I դարում հայտնի է, որ հայերը և մարերը ցամաքային ճանապարհով Միջագետքից արևելյան ապրանքներ էին հասցնում Կասպից ծովի հյուսիսային շրջանները: Հետագա դարերում, Արշակունյաց և մարզպանության շրջանում տնտեսական այդ կապերը մեծ առաջընթաց են ապրում[59]: Խազարական պետության մեջ մեծ թիվ էին կազմում և ակտիվ գործունեություն էին ծավալել հայ վաճառականները[61]: Ինչպես նշում է Բ. Միլլերը, հայ վաճառականական այս շերտը միջնորդ դեր էր կատարում Վոլգյան շրջանի և Կովկասի ու հարավի միջև կատարվող առևտրում՝ հետագայում իր ձեռքում կենտրոնացնելով մետաքսի առևտուրը[62]: Ընդհուպ մինչև 16-րդ դ. հայ վաճառականները գործուն մասնակցություն ունեին Կասպյան առևտրական մայրուղու միջոցով կատարվող միջազգային առևտրին: Բ. Միլլերը կարծիք է հայտնում, որ հայ առևտրականների դերը այդ միջազգային առևտրական հարաբերություններում կապված է նաև արևելյան և հս.-արևելյան Այսրկովկասում հայկական էթնիկ ներկայության խնդրի հետ[63]:

Դաղստանյան մի շարք լեզուներում արմենիզմների առկայությունը նույնպես ենթադրում է երկարատև էթնոմշակութային կապերի առկայություն այդ լեզուները / հայերեն և դաղստանյանան լեզուներ/ կրողների միջև, ընդ որում համարվում է, որ դրանց մի մասը դաղստանյան լեզուներ է անցել մինչև արաբական նվաճումները[64]:

Հայկական ազեցության մասին է խոսում նաև հվ. Դաղստանում «Արմանի» կամ «Էրմենի» բաղադրանասով վաղմիջնադարյան բնակավայրերի առկայությունը «Էրմենի խուռ»/ հայկական գյուղ/, «Էրմենի շեհեր»/ հայկական քաղաք/, կամ «Էրմենենի քալա»/ հայկական ամրոց/, «Էրմենի ռյախ» /հայկական ճանապարհ/, «Էրմենի սալար» /հայկական պատնեշներ, ամրություններ/ և այլն[65]:

Եղած տեղեկությունները նկատելի լույս են սփռում հս. - արևելյան Այսրկովկասում հայկական էթնիկ ներկայության խնդրի վրա և պատկերացում են տալիս, այն մասին, որ հայերի էթնոմշակութային կապերը այդ ռեգիոնի հետ բազմաշերտ ու տարաբնույթ էին:

Ինչ խոսք, այս շրջատարածքում քրիստոնեության տարծման հետ մեկտեղ, հայկական մշակույթի կրողն էին դառնում նաև այլ խմբեր և «հայ» կամ ավելի ուշ «արմանի» անվանումները, ըստ միջնադարյան ավանդույթի կարող էին տարածվել նաև քրիստոնեություն ընդունած այդ խմբերի վրա ևս, սակայն թե՛ ավանդությունները, թե՛ մատենագրական տեղեկություններ փաստում են էթնիկ հայկական ներկայության մասին: Մյուս կողմից վերը նշված դավանական և դրա հետ կապված մշակութային ազդեցության մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ:

Նախ համարվում է, որ 552թ. այսինքն Աղվանից կաթողիկոսությունը Չողից Պարտավ տեղափոխումից հետո է, որ տեղի է ունենում Աղվանից եկեղեցու «հայկականացումը»՝ եկեղեցու պաշտոնական լեզու է դառնում հայերենը, որը նաև ժամասացության լեզու էր, ընդ որում սկզբնական շրջանում հայերենին զուգահեռ շարունակվում է օգտագործվել նաև «աղվաներենը» և հետագա զարգացումների ընթացքում է, որ Կուրի ձախափնյակի հայադավան խմբերի համար գրության լեզու դառնում հայերենը[66]:

Պետք է ընդծել նաև, որ Բուն Աղվանքում քրիստոնեության տարածումը երբևիցե չբերեց տեղական ժողովուրդների «հայացմանը», և նրանք շարունակում էին մնալ սեփական ավանդույթների և լեզվի կրողը[67]:

Բացի այդ, կաթողիկոսական նստավայրը Չողից Պարտավ տեղափոխելը մատնանշում էր Կուրի աջափնյակի տնտեսամշակութային գերակայությունը, քրիստոնեության տարածվածությունը և դիրքերի ամրությունը ձախափնյակի նկատմամբ[68]:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 5-6-րդ դդ. հս.-արևելյան և արևելյան Այսրկովկասը գտնվում էր Մասանայան Իրանի կազմում, /հետագայում մահմեդական զանազան կազմավորումների՝ խալիֆայություն, Շիրվանշահերի պետություն.../ և հայկական դավանական ազդեցության խնդիրը մեծ չափով կախված էր քաղաքական կացությունից: Իշխանությունները, ըստ իրավիճակների, կարող էին սահմանափակել կամ խրախուսել Աղվանից եկեղեցու գործունեությունը, և, ինչպես ցույց են տալիս պատմական զարգացումները, այդ շրջատարածքում քրիստոնեության դիրքերն ու ազդեցությունը գնալով սահմանափակվում և թուլանում էր:

Վերջապես հայկական ազդեցությունը օժտված չէր լիակատար քաղաքական իշխանությամբ, ինչը նրա համար կկարողանար տևական հիմք և գործունեության դաշտ ապահովել: Չնայած վաղ միջնադարում Աղվանից մարզպանության կազմում Արցախ-Ուտիքի գոյությունը որոշակիորեն բերում էր հայերի քաղաքական դիրքերի ամրապնդմանը և ուժեղացմանը:

Հայկական դավանական ու մշակութային ազդեցության խնդիրները քննարկելիս պետք է հաշվի առնել վերը նշված գործոնները, և հարցը դիտարկել այդ տեսանկյունից:

Հայկական կամ քրիստոնեական մշակութային շերտը տեղական չհամախմբված «աղվանականի» համեմատությամբ, անշուշտ, գտնվում էր ավելի բարձր դիքերի վրա, սակայն զիջում էր իրանականին, որը օժտված էր քաղաքական իշխանությամբ և էթնիկ լայն ներկայությամբ: Ինքնին «արմանի» բաղադրամասով անվանումների տարածվածությու-

նը ցույց է տալիս հայկական կամ քրիստոնեական տարրի փոքրամասնությունը քննարկվող շրջատարածքում:

Վերը ասվածից բխում է, որ հայկական դավանական ազդեցությունը չէր կարող տարածում ունենալ քաղաքական իշխանությամբ ու էթնիկ լայն ներկայությամբ օժտված իրանական միջավայրում և, ավելին, բերեր նրանց «հայացմանը»:

Այս ամենից հետևում է որ հայ-իրանական էթնոմշակութային շերտերը էլիտար դիրք ունեին կովկասյանի համեմատ: Սակայն հայկականը ենթակարգվում էր իրանականին, որի գերակայությունը արևելյան Այսրկովկասում որոշ փոփոխություններով հանդերձ պահպանվեց մինչև 15-16-րդ դդ: Վերը նշված վաղմիջնադարյան այս իրողությունները բավարար նախադրյալներ էին հանդիսանում իրանական տարրի հետ գրեթե նույն սոցիալական կարգավիճակում գտնվող հայկական ռազմածառայական վերնախավի լեզվամշակութային փոփոխությունների համար: Եթե նկատի ունենանք, որ միջէթնիկ, միջմշակութային փոխհարաբերությունների մեջ են մտնում և դրանց հետևանքով առաջ եկած մշակութային փոփոխությունների կրողն են դառնում նախ և առաջ էլիտար շերտերը /ֆեոդալներ, արիստոկրատիա, վաճառականներ.../, այնուհետև դրանք տարածվում են մյուս խավերում[39], ապա ակնհայտ կդառնա Արևելյան Այսրկովկասում հայկական տարրի էթնոմշակութային զարգացումների տրամաբանությունը բազմադարյան իրանական ազդեցության գերակայության պայմաններում:

Հայկական շերտի շարունակական գոյությունը արևելյան Այսրկովկասի բազմադարյան իրանական ազդեցության գերակայության պայմաններում, զուգակցված դեռևս վաղմիջադարյան իրողությունների, յուրահատուկ աշխարհագրական ու էթնիկական միջավայրի հետ, բավարար սոցիալական, քաղաքական, մշակութային նախադրյալներ էին հանդիսանում իրանական շերտի հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվող հայկական այդ տարրի էթնոլեզվական փոփոխությունների համար, որի հետևանքով այս շերտը 18-րդ դ. հիշատակվում է արդեն որպես թաթախոս խումբ:

Անշուշտ, վաղմիջնադարյան հայկական այդ խումբը իր զարգացումների ընթացքում միատարր չէր կարող մնալ և լինել: Այն, անկասկած, իր մեջ ներառել է հայկական /թերևս նաև այլազգի/ այլ խմբեր ու տարրեր ևս, կրել է նաև ժողովրդագրական փոփոխություններ և տեղաշարժեր, սակայն խմբի ձևավորման խնդիրը անմիջականորեն կապված է դեռևս - վաղմիջնադարում Արևելյան Այսրկովկասում ձևավորված իրողությունների և ռեգիոնի էթնոմշակութային զարգացումների տրամաբանության հետ:

HAKOBYAN ARSEN

ABOUT THE ARMENIAN AND IRANIAN ETHNO-CULTURAL CONTRIBUTIONS IN THE EASTERN TRANSCAUCASUS (ON EXAMPLE OF THE FORMATION OF A GROUP)

(Summary)

The issues of the formation and historical developments of the group Tat speaking Armenians are an interesting problem of Armenian, Iranian, Caucasian studies. These issues are closely connected with the questions of the presence of Armenian and Iranian ethno-cultural sections and their interrelations in the Eastern Transcaucasus since early Middle Ages.

It is known, that in the 5-6th centuries the Iranian impacts /ethnic, lingo- cultural, political/ predominated in the Eastern Transcaucasus by the successive policy of the Sassanids and despite of the political, confessional changes in the region the domination the Iranian influence existed till the 15-16th centuries with some changes.

The Armenian influence as well had a major part in the ethno-cultural and political developments of the region, particularly in the spreading of Christianity and the cultural missions. Besides it, in the 5-6th centuries the Armenian element was involved in the defense of Derbend-Chogh by the Sassanids and in the 6th century the Armenian military inhabitants was settled in the North-East Transcaucasus, especially in the territories / Derbend, Moushkour.../, where in this period Koubad I and Kosrov Anoushirvan settled the Iranian populations from Fars for the same those purpose. During the mentioned period those regions were filed of direct Armeno-Iranian interrelations.

Although the Armenian ethno-cultural element was more progressive than the local no consolidated "Albanian" element, but was substituted to Iranian ethno-culture, which had political rule and big ethnic population.

Starting from the early Middle Ages the social, political, quantity proportions of these interrelated ethno-cultural elements, the continual survival of the Armenian element under the condition of Iranian dominating influence in the Eastern Transcaucasus, together with the specific geographical and ethno-cultural environment were satisfactory social, political and cultural grounds for the ethno-lingual changes of the Armenian communities which had deep interrelations with the Iranian population and culture. Because of these reasons this Armenian people are mentioned as Tat speaking group in the 18th century.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., Москва, 1988, стр. 91.
2. Гасанов М., Дагестан и иранский мир, Ереван, 1999, стр. 52.
3. История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., стр. 91.

4. 4.Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древноармянских источниках, Ереван, 1987, стр.113-114, 118-119. Հետազոտողների մի մասը հակված են նույնացնել Դերբենդ և Չող քաղաքները: Նույն տեղում, էջ 121-122:
5. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1994, էջ 57:
6. Тревер К., Очерки по истории и культуры Кавказской Албании, М-Л, 1959, стр. 205.
7. История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., стр. 101.
8. Եղիշե, էջ 34:
9. Акопянн А., նշվ. աշխ, էջ 120-121:
10. История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., стр. 101.
11. Ашурбейли С., Государство Ширваншахов, Баку, 1983, стр. 15.
12. История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., стр. 101. Ашурбейли С., նշվ. աշխ., էջ 15:
13. Гаджиев В., О русском переводе "Дербент-наме", Вопросы истории - Дагестана, 1975, вып. 3, стр. 255-256.
14. Ашурбейли С., նշվ. աշխ., էջ 15:
15. Козубский Е., История города Дербенда, Темир хан- щура, 1906, стр. 19. История Дагестана, Махачкала, 1967, т. I, стр. 269.
16. Ашурбейли С., նշվ. աշխ., էջ 16:
17. Бакиханов А., Гюлистан -- и ирам, Баку, 1991, стр. 44.
18. Նույն տեղում, էջ 45:
19. Гасанов М.,նշվ. աշխ., էջ 36.
20. Նույն տեղում, էջ 31:
21. Նույն տեղում, էջ 35:
22. Նույն տեղում, էջ. 33:
23. Акопян А., նշվ. աշխ, էջ 119-120:
24. Минорский В., История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, стр. 31.
25. Ашурбейли С., նշվ. աշխ. էջ 44-46:
26. Рамазанов Х., Шихсаидов А., Очерки истории южного Дагестана, Махачкала,1961, стр. 41-42.
27. Ашурбейли С., նշվ. աշխ. էջ 46:
28. Гасанов М., նշվ. աշխ., էջ 53:
29. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 73:
30. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 196-197:
31. Հայ ժողովրդի պատմություն, հա. 2, Երևան, 1984, էջ 185:
32. Եղիշե, էջ 34:
33. Мурадян П., Кавказский культурный мир и культ Григория Просветителя, Кавказ и Византия, 1982, вып. 3, стр. 5-20.
34. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 25-27:
35. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 90:

36. Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 93-94
37. Акопян А., նշվ. աշխ. էջ 113 - 114:.
38. Կատվալյան Մ., Վարդանանց պատերազմ, Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 11, Երևան, 1985, էջ 315-316:
39. Եղիշե, էջ 58:
40. Акопян А., նշվ. աշխ. էջ 113 - 114:.
41. Նույն տեղում, էջ 136-137:
42. Նույն տեղում, էջ134-135:
43. Акопян А., նշվ. աշխ., էջ135:
44. Артамонов М., Древный Дербент, Советская археология, 1946, VIII, стр. 141-143.
45. Баладзори, Книга завоевания стран /пер. П. Жузе/, Баку, 1927, стр. 5.
46. Ибн ал Факих /пер. Н. Караулов/, Сборник для описани местностей и племен Кавказа /СМОМПК/, вып. 31, Тифлис, 1902, стр. 32.
47. Кудама /пер.Н. Караулов/, СМОМПК, вып. 32, Тифлис, 1903, стр. 30-31.
48. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին/ կազմեց Հ. Նալբանդյան/, Երևան 1965, էջ 17:
49. Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում, Երևան, 1987, էջ 469-470:
50. Еремян С., Сюния и оборона сасанидами кавказских проходов, Известия АН СССР/ Арм. фил./,1941, И 7, стр. 33-40:
51. Թարխուդարյան Մ., Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, ՊԲՀ,1969, N 3, էջ 125-147:
52. Яамполский З., Об этнической непреривности на почве Азербайджана, Вопросы истории Кавкаазской Албании, Баку, 1962, стр. 36.
53. Минорский В., նշվ. աշխ., էջ 31:
54. Christensen A., L' Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, p. 369.
55. Минорский В., նշվ. աշխ., էջ 31.
56. Հայ ժողովրդի պատմություն, հտ. 2, էջ 11-12, 213-214: Еремян С., Политическая история Албании III-VIIвв., Очерки истории СССР III — IX вв., М., 1958, стр. 318.
57. Рамазанов Х., Шихсаидов А.,նշվ. աշխ., էջ 46:
58. Бакиханов А., նշվ. աշխ., էջ 45:
59. Казиев И., Песни лезгинских мазанов, цабанов, гусанов,1970, Մատենադարան, այլ հեղինակների արխիվ, թղթ. 240/թ/, վավ. 220/ա/,էջ12-13, 18-19:
60. Խաչիկեան Լ. Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, Աշխատութիւններ, հ, Բ, Երևան, 1999, էջ, 151:
61. Աբրահամյան Աշ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հտ. Ա, Երևան, 1964, էջ 122:
62. Миллер Б., Об армянских надписях в Болгарах и Казани, Ленинград, 1925, стр. 79.
63. Миллер Б., Таты, их расселения и говоры, Баку, 1929, стр. 16.

64. Гасанов М., К вопросу о христианстве в Дагестане, «Իրան- նամէ», 2001, հտ. 36, էջ 94:
65. Рамазанов Х., Шихсаидов А., նշվ. աշխ., էջ 46:
66. Акопян А., նշվ. աշխ., էջ 136-139:
67. Նույն տեղում, էջ 139-140,148:
68. Նույն տեղում, էջ 135-137:
69. Арутюнов С., Народы и культуры: развитие и взаимодействие. Москва, 1989, стр. 186-187.